ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. հունվար 11 -ին, N 125-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 5 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով, 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» N 1550-Լ որոշմամբ՝

որոշում եմ.

1. «ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» /այսուհետ՝ Կանոնադրություն/ ՀՀ Արագածոտնի մարզպետի 2003 թվականի մարտի 18-ի N 5 որոշման և որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 5-րդ կետում «մարզպետարանի» բառը փոխարինել «մարզպետի» բառով, իսկ «պետ Ս.Ղուկասյանի» բառերը փոխարինել «պետի» բառով,

2) Կանոնադրության 3-րդ կետում «Գրիգորյան 33» բառերը փոխարինել «Նարեկացու 79» բառերով,

3) Կանոնադրության 38-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«38. Մարզադպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:»,

4) Որոշման մեջ «6-րդ կետը» բառերից հետո լրացնել ստորակետ կետադրական նշանով և «ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2145-Ն որոշման 2-րդ կետը» բառերով,

5) Կանոնադրությունը լրացնել 38.1-ին կետով, հետևյալ բովանդակությամբ.

«38.1.Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հաստատությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատության իր կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար»,

6) Կանոնադրությունը լրացնել 54.1-ին կետով, հետևյալ բովանդակությամբ.

«54.1. Հաստատության լուծարման դեպքում հաստատության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե»:

2. ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին.

սույն որոշման մեկ օրինակը տրամադրել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 6/12/2025 12:44:42 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ